ՀԱՅ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ *)

—

Օրթիենական յանձնաժողովը կարևոր համարից Մեծ Օրթիեանի փակման տօնին խորհրդակցութիւն ունենալ մեր ուղղագրութեան խնդրի մասին, որ տարբերը ի վեր արծարծվում է մեր մամուլի մէջ։ Նկատի ունենալով անհրաժեշտութիւնը մեր ուղղագրութեան միակերպութեան, որ հետզհետէ դժբաղդաբար աւելի ու աւելի խանգարվում է, կը խնդրենք, մեծ. պարոն, որ հաճէիք ներկայ լինել այդ խորհրդակցութեանը։ Իսկ եթէ չէք կարող հոգալ. 12-ին էջմիածնում լինել, խնդրում ենք ձեր կարծիքն ուղարկել, թէ արդեօք պէ՞տք է և կարելի է մեր ուղղագրութեան մէջ փոփոխութիւններ մացնել։ Շատ կը պատասխանեիք մեզ, եթէ պատասխանէիք ներքևում գրված հարցերին։

1. Եթէ ձեր կարծիքով պէտք չէ և կարելի չէ փոփոխութիւն մացնել մեր ուղղագրութեան մէջ, կը խնդրենք պատասխանել հետևեալ հարցերին.

1) Ինչու՞ պէտք չէ և կարելի չէ այդ անել։

2) Ի՞նչ կարծիք ունէք ուղղագրութեան միակերպեան մասին։

3) Ինչից է առաջանում մեր ուղղագրութեան մէջ փոփոխութիւններ մացնելու ձգտումը, որով ուղղագրութեան խնդիրը շարունակ արծարծվում է և հետզհետէ նոր-նոր փոփոխութիւններով են գրում։

4) Ի՞նչպէս պիտի վերաբերվել մեր ուղղագրութեան մէջ հետզհետէ մտնող նորանոր փոփոխութիւններին. արդեօք պիտի թողնել ազա՞տ թէ՞ պէտք է և կարելի է որևէ ձևով որոշ ուղղութիւն տալ այդ ձգտումներին, կամ գրանց առաջն առնել յանուն ուղղագրութեան միակերպութեան։ Եւ եթէ կարելի է և պէտք է այդ անել, ո՞վ և ինչպէս պէտք է անի։

5) Եթէ անհրաժեշտ է միակերպ ուղղագրութիւնը, հարկաւոր չէ արդեօք միակերպութեան վերածել տատանվող ուղղագրական ձևերը (թանկ-թանգ, գուտա-գուտդ, վաղեանս-վաքեանս, ծնօղ-ծնող և շատ նմանները)։ Ինչպէս պէտք է ընտրութիւն անել այդպիսի բառերի գրութեան մէջ։

6) Ի՞նչպէս պիտի վերաբերվել առանձնապէս վ հնչիւնի վ, ւ, ու նշանագրերով ոչ միակերպ ուղղագրական ձևերին (սաուել, սաւել, սավել)։ Արդեօք պիտի թողնել այդ տարբեր գրութիւնները, թէ՞ պէտք է և կարելի է այժմ ուղղագրութիւնն այդ մասին միակերպութեան վերածել, և ինչպէս։

7) Ուռե՞նք արդեօք մեր գրական լեզուի մէջ երկու տարբեր հնչիւն վ բաղաձայնի համար, ինչպէս կարծում են, մէկը կոշտ վ (ծով) միւսը փափուկ վ (հաւ), թէ դա լոկ սխալ հասկացողութիւն է, և մենք միայն մի վ հնչիւն ունենք, և «վարեր», «կով», «աւազ»,

*) «Մշակ» № 205-ում տպեցինք էջմիածնի Օրթիենական Կենտրոնական Յանձնաժողովի մշակած տօնակարգը, որի մէջ նշանակված են և մէջի այլոց հոկտ. 12—14-ին «Եմեսարանում գիտական բնիկներ և խորհրդակցութիւններ ուղղագրութեան խնդիրների շուրջը»։

Այսօր տպում ենք ուղղագրական հարցերի ցուցակը, որը Յանձնաժողովի առաջարկութեամբ կազմել է Եմեսարանի ուսուցիչ Մ. Աբեղեանը և նոյն Յանձնաժողովի կողմից առաջարկված է հրատարակութեան։

Յանկացողները պատասխանել այս հարցերին կամ նրանց մի մասին (կամ նաև ուրիշ հարցերի, որոնք չէ՞ն այս ցուցակում), կարող են էջմնց պատասխանները ուղարկել Յանձնաժողովին կամ տպարերել լրագրում մինչև յօբելեանական տօները։ Խմբ.